

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

<<ԵԿԱՄՏԱՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. “Եկամտահարկի մասին” Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-183 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 7-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ <<q>> կետով՝

<<q> յուրաքանչյուր հարկատեսակի (այդ թվում՝ հարկերին փոխարինող վճարների), տուրքերի և պարտադիր այլ վճարների, բնօգտագործման վճարների, տույժերի և տուգանքների մինչև հարյուր դրամ պարտավորությունների գումարները, որոնք հարկ վճարողի լուծարման դեպքում անտեսվում են:>>:

Հոդված 2. Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ նախադասությունում <<հայտարարության հիման վրա>> բառերը փոխարինել <<՝ վերադաս հարկային մարմնի հաստատած ձևով գրավոր հայտարարության հիման վրա>> բառերով:

Հոդված 3. Օրենքի 29-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

<<Կանխավճարների մուծումները կատարվում են յուրաքանչյուր եռամսյակ, նախորդ տարվա եկամտահարկի փաստացի գումարի և (կամ) եկամտահարկի հաշվարկային մեծության մեկ վեցերորդի չափով յուրաքանչյուր եռամսյակի վերջին ամսվա 15-ից ոչ ուշ:>>:

2) 3-րդ մասից հանել <<՝ այդ մասին նախօրոք հայտնելով հարկային տեսչության մարմիններ,>> բառերը.

3) 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

<<6. Նախորդ տարվա նկատմամբ ընթացիկ տարվա հարկվող եկամուտը պակաս նախատեսելու դեպքում հարկատուն կանխավճարի եռամսյակյին մեծությունը որոշում է ինքնուրույն՝ հարկային տեսչության մարմիններին ներկայացնելով վերադաս հարկային մարմնի կողմից հաստատված ձևի հայտարարություն: Հաշվարկված կանխավճարների տարեկան հանրագումարը տվյալ տարվա փաստացի եկամտահարկի երկու երրորդից պակաս լինելու դեպքում հարկատուն վճարում է տույժ՝ փաստացի ստացված

Եկամտահարկի մեկ վեցերորդի և տվյալ եռամսյակում փաստացի վճարված կանխավճարի տարբերության գումարի նկատմամբ՝ կանխավճարի վճարման համար սույն օրենքի 29 հոդվածի 2-րդ կետով սահմանված օրվանից մինչև հարկային տեսչության մարմնին փաստացի եկամտահարկի գումարը հայտնի դառնալու (եկամտահարկի հաշվարկը ներկայացնելու) օրը:>>:

Հոդված 4. Ուժը կորցրած ճանաչել Օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ կետի <<դ>> ենթակետը:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2011 թվականի հունվարի 1-ից: Սույն օրենքի 2-րդ, 3-րդ և 4-րդ հոդվածները կիրառվում են 2011 թվականի հունվարի 1-ից հետո հաշվետու ժամանակաշրջանների համար: